29-ՐԴ ՆԻՍՏ

23 հոկտեմբերի 1918թ.

Օրակարգի հարցերն են.

1. Օրինագիծ դատաստանական վճիռների հայտարարման ձևի մասին.
2. Օրինագիծ Դիլիջանի շրջանում աճարի պտուղ և խոզակաղին հավաքելու մասին.
3. Օրինագիծ կառավարությանը վարկ բաց անելու մասին.
4. Օրինագիծ նախահաշվի մնացորդների ծախսման մասին.
5. Ներքին գործոց նախարարի պատասխանը հարցումներին.
6. Օրինագիծ պետական պաշտոնյաներին միանվագ նպաստ տալու մասին.
7. Օրինագիծ քաղաքային անշարժ կայքերի տուրքերի ավելացման մասին.
8. Վրաստանի Հայոց Ազգային խորհրդին գաղթականական գործի համար 5 միլիոն ռ. տալու մասին.
9. Օրինագիծ արդյունաբերական հիմնական և լրացուցիչ տուրքերի ավելացման մասին.
10. Օրինագիծ հողային և եկամտային տուրքերի ավելացման մասին.
11. Բժշկասանիտարական հանձնաժողովի առաջարկը գաղթականների բժշկասանիտարական օգնության ծախսերի պարագրաֆ 4-ի վերաբերմամբ.
12. Ընթացիկ գործեր:

Վերջնականապես հաստատվում են օրակարգում նշանակված առաջին չորս հարցերը:

Արդարադատության մինիստր. - Նկատելով, որ օրենքները ճիշտ ձևով չեն հրատարակվում, առաջարկում է մինչև առանձին ձև մշակելը՝ օրենքները հրատարակել «Կառավարության լրաբեր»-ի մեջ: Այդ հարցը հետաձգվում է:

Ներքին գործոց մինիստրը պատասխանում է Դաշնակցական ֆրակցիայի երկու և Ժող[ովրդական] կուս[ակցության] ֆրակցիայի մեկ հարցումներին: Իսկ Դաշնակցական ֆրակցիայի այն հարցին, թե ի՞նչ է արվել Սահմ[անադիր] ժողովի գումարման համար, Մինիստր-նախագահը պատասխանում է, որ դեռևս ոչինչ չի արված, որովհետև մեր երկրի սահմանները դեռ անորոշ են:

Ս. Թորոսյանը հայտնում է մեր ականավոր ինտելիգենտներից Ավետիք Շահխաթունյանի մահվան մասին: Նրա հիշատակը հարգվում է ոտքի կանգնելով:

Հ. Սարգսյանը զեկուցանում է պետական պաշտոնյաներին միանվագ նպաստ տալու օրինագծի մասին: Օրինագիծն ընդունվում է մասնավոր փոփոխությամբ:

Վ. Տեր- Թորոսյանը զեկուցանում է քաղաքային անշարժ կայքերի տուրքերի ավելացման մասին: Օրինագիծն առանց փոփոխության ընդունվում է 1918 թվի համար:

Ընդունվում է Վիրահայ Ազգ[ային] խորհրդին 5 միլիոն նպաստ տալու օրինագիծը՝ գաղթականների օգնության համար:

Ընդունվում է բժշկասանիտարական հանձնաժողովի առաջարկը, ըստ որում, մինչև բժշկասանիտարական հանձնաժողովի նախահաշվի կազմելը ծախսերն արվեն գաղթ[ականության] օգն[ության] նախահաշվի պարագրաֆ 4-ի հիման վրա: Նիստը փակվում է ժամը 11-ին և օրակարգի մյուս երկու հարցերը հետաձգվում են հաջորդ նիստին:

«Կառավարության լրաբեր», 8 նոյեմբերի 1918 թ.